ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ 3

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՁԵՌՔ ԲԵՐՈՒԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՂ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԳՈՐԾԱՏՈՒ ՄՈՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՁԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԿԱՋԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի «27» 03 2021 թ.
(կնքման վայրը)

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության Գյումրի տարածքային կենտրոնը, այսուհետ՝
(տարածքային կենտրոնի անվանումը)

Տարածքային կենտրոն, ի դեմս տնօրեն Մուքուչյանի Սեդրակի Ս.-ի,
(աստիճանը, անունը, հայրանունը)

որը գործում է կանոնադրության համաձայն
(կանոնադրության համի (մանդատագրի)

«Հեղինար» Հ.Ո.Ա.Կ. ԲԲԸ Գյումրի մասնաճյուղ
(իրավաբանական հասցի անվանումը կամ ստացած ձեռնարկատիրոջ մասնագի, վերջնական գրանցման օրը, ամիսը, տարին, վերջնական գրանցման վկայական համարը, կամ ֆիզիկական անձ՝ ՀՀ-ում ձեռնարկատեր չհանդիսացող գործատուի անունը, ազգանունը, հաշվառման վայրը)

այսուհետ Գործատու, ի դեմս տնօրեն Հակոբյանի Հակոբի Գրիգորի,
(հանձնարարագրի (լիազորագրի) համարը, թողարկման ամսաթիվը, ազգանունը, անունը)

որը գործում է կանոնադրության համաձայն
(կանոնադրության, լիազորագրի կամ այլնի)

Ստեփանյան Սերգեյ Հ.-ի 021623493
(գործատուի ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը, տրման օրը, ամիսը, տարին կամ հանրային ծառայությունների համարանիշը, հաշվառման վայրը իսկ ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում նաև ներկայացուցչի անունը, ազգանունը, լիազորագրի տրման օրը, ամիսը, տարին)

այսուհետ Շահառու, մյուս կողմից (բոլորը միասին հանդես հիշատակման դեպքում, այսուհետ՝ Կողմեր), արտահայտելով միմյանց հետ համագործակցելու իրենց պատրաստակամությունը և ձգտումները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 12 հավելվածով սահմանված պահանջները և Կողմերի միջև կայացած բանակցությունների արդյունքները, թղթային տարբերակով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի վերաբերյալ.

(նախաբանը լրաց. 08.10.18 N 108-Ն)

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրի առարկան ձեռք բերված մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող Շահառուի՝ Գործատուի մոտ մասնագիտական աշխատանքային փորձի ձեռքբերման համար Տարածքային կենտրոնի կողմից աջակցության տրամադրումն է:

2. Պայմանագրի համաձայն

1) Գործատուն պարտավորվում է Շահառուին ընդունել աշխատանքի, իր հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող կամ քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ մատուցող մասնագետների միջոցով, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում անձամբ կազմակերպել Շահառուի մասնագիտական *որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձի* ձեռքբերման գործընթացը.

2) Շահառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված ժամկետով ընդունվել Գործատուի մոտ իր մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու և աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու նպատակով.

3) Տարածքային կենտրոնը Գործատուին է տրամադրում դրամական միջոցներ՝ Պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան, Պայմանագրով սահմանված չափով և ժամկետում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Տարածքային կենտրոնը պարտավորվում է՝

1) ըստ անհրաժեշտության Գործատուին և Շահառուին տրամադրել համապատասխան խորհրդատվություն՝ զբաղվածության կարգավորման սոցիալական պետական ծրագրի շրջանակներում իրականացվող և Պայմանագրով սահմանված՝ ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող Շահառուի՝ Գործատուի մոտ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրմանն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Գործատուի և Շահառուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2) Գործատուին վճարել դրամական միջոցներ՝ Պայմանագրի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված չափով, կարգով, ժամկետում և պայմաններին համապատասխան,

3) չմիջամտել Գործատուի և Շահառուի միջև ծագած աշխատանքային հարաբերություններին և Գործատուի կողմից իրականացվող գործունեությանը,

4) չիրազեկել կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Գործատուի և Շահառուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

4. Տարածքային կենտրոնն իրավունք ունի՝

1) Շահառուից և Գործատուից պահանջել Պայմանագիրը կնքելուց հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով միմյանց միջև հաստատել աշխատանքային հարաբերություններ,

2) պահանջել Գործատուից Շահառուին աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտի կամ աշխատանքային պայմանագրի (այսուհետ՝ աշխատանքային պայմանագիր) կրկնօրինակը ներկայացնել Տարածքային կենտրոն՝ այն ընդունելուց (կնքելուց) հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում,

3) մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա երկրորդ աշխատանքային օրը Գործատուից ստանալ նախորդ ամսվա ընթացքում ծրագրին Շահառուների մասնակցության (աշխատած ժամանակահատվածի) մասին տեղեկանք,

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում Գործատուից ստանալ Շահառուին կատարված վճարումների մասին տեղեկությունները (վճարման ցուցակի պատճենով կամ տեղեկանքով),

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով

ա. Գործատուից ամբողջությամբ ստանալ Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Գործատուին վճարված գումարը, եթե սույն կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքային պայմանագիրը Գործատուի նախաձեռնությամբ լուծվել է այն կնքելուց հետո երեք ամսվա ընթացքում (բացառությամբ Շահառուի՝ Պայմանագրի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ծրագրից հեռացման կամ այլ աշխատանքի տեղավորվելու դեպքերի), Պայմանագրով նախատեսված՝ Շահառուին աշխատավարձ չվճարելու դեպքում, ինչպես նաև «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ դեպքերում,

բ. Շահառուից ամբողջությամբ ստանալ Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Գործատուին վճարված գումարը, եթե ծրագիրը Շահառուի նախաձեռնությամբ ժամկետից շուտ է դադարեցվել, ինչպես նաև «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում,

6) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

5. Գործատուն պարտավորվում է՝

1) Պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Շահառուի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ առնվազն երեք ամիս ժամկետով, և պատշաճ կերպով կազմակերպել Շահառուի մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը,

2) աշխատանքային պայմանագիր կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքային պայմանագրի կրկնօրինակը ներկայացնել Տարածքային կենտրոն,

3) աշխատանքային պայմանագիր կնքելուց հետո *մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող* ամսվա երկրորդ աշխատանքային օրը Տարածքային կենտրոն ներկայացնել տեղեկանք՝ նախորդ ամսվա ընթացքում Շահառուների աշխատած ժամանակահատվածի մասին,

4) աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում Շահառուի համար ապահովել աշխատանքային բնականոն պայմաններ,

5) աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում չվատթարացնել Շահառուի աշխատանքի էական պայմանները կամ Շահառուի համար չսահմանել առավել նվազ

բարենպաստ պայմաններ այն պայմանների հստակեցում, որոնք նախատեսվելու են աշխատանքային պայմանագրով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերի,

6) սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետից շուտ Շահառուին աշխատանքից ազատելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Տարածքային կենտրոնին ոչ ուշ, քան աշխատանքից ազատելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում,

7) Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Տարածքային կենտրոնի կողմից իրեն վճարված գումարից Շահառուին վճարել աշխատավարձ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափով,

8) ըստ անհրաժեշտության Տարածքային կենտրոն ներկայացնել համապատասխան տեղեկանք՝ Շահառուի նպաստակային սոցիալական վճար կատարող հանդիսանալու մասին,

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերադարձնել Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Տարածքային կենտրոնի կողմից իրեն վճարված գումարն ամբողջությամբ, եթե Պայմանագրի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքային պայմանագիրը լուծվել է Գործատուի նախաձեռնությամբ՝ այն կնքելուց հետո երեք ամսվա ընթացքում (բացառությամբ Շահառուի՝ ծնողից հեռացման կամ այլ աշխատանքի տեղավորվելու դեպքերի). Պայմանագրով նախատեսված՝ Շահառուին աշխատավարձ չվճարելու դեպքում, ինչպես նաև «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ դեպքերում:

6. Գործատուն իրավունք ունի՝

1) պահանջել Տարածքային կենտրոնից չմիջամտելու Գործատուի և Շահառուի միջև ծագած աշխատանքային հարաբերություններին և Գործատուի կողմից իրականացվող գործունեությանը,

2) Տարածքային կենտրոնից ստանալ դրամական միջոցներ Պայմանագրի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված չափով, կարգով, ժամկետում և պայմաններին համապատասխան,

3) պահանջել Շահառուից ոչ ուշ, քան Պայմանագրի կնքումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել աշխատանքի ընդունման համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը,

4) Տարածքային կենտրոնից պահանջել տրամադրել համապատասխան խորհրդատվություն զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում իրականացվող և Պայմանագրով սահմանված ձևով բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող Շահառուի՝ Գործատուի մոտ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրմանն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Գործատուի և Շահառուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

5) Տարածքային կենտրոնից պահանջել չհրապարակել կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում Տարածքային կենտրոնին հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Գործատուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի,

6) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

7. Շահառուն պարտավորվում է.

1) Պայմանագրի կնքումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, Գործատուին ներկայացնել աշխատանքի ընդունման համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը,

2) Գործատուի հետ համաձայնեցված ժամկետում Գործատուի մոտ ընդունվել աշխատանքի՝ առնվազն Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետով,

3) ձեռնարկել իրենից կախված անհրաժեշտ և բավարար միջոցներ Պայմանագրի 2-րդ կետի 1-ին ենթակետով նշված մասնագիտի մոտ մասնագիտական աշխատանքային փորձի ձեռքբերման նպատակով,

4) Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետից շուտ աշխատանքից ազատվելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Տարածքային կենտրոնին ոչ ուշ, քան աշխատանքից ազատվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում,

5) իր նախաձեռնությամբ ծրագրի ժամկետից շուտ դադարեցման դեպքում, ինչպես նաև «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով վերադարձնել Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Տարածքային կենտրոնի կողմից Գործատուին վճարված գումարը:

8. Շահառուն իրավունք ունի.

1) Տարածքային կենտրոնից պահանջել տրամադրել համապատասխան խորհրդատվություն զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում իրականացվող և Պայմանագրով սահմանված ձևով բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող Շահառուի՝ Գործատուի մոտ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք

բերելու համար աջակցության տրամադրմանն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Գործատուի և Շահառուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ.

2) Գործատուից պահանջել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան, Շահառուին ընդունել աշխատանքի առնվազն Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետով և պատշաճ կերպով կազմակերպել Շահառուի մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը.

3) Տարածքային կենտրոնից պահանջել չհրապարակել կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում Տարածքային կենտրոնին հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Շահառուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի.

4) Գործատուից պահանջել աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում Շահառուի համար ապահովել աշխատանքային բնականոն պայմաններ.

5) Գործատուից պահանջել աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում չվատթարացնել Շահառուի աշխատանքի կնքման պայմանները կամ Շահառուի համար չսահմանել առավել ծանր բարենպաստ պայմաններ այն պայմանների համեմատ, որոնք նախատեսվելու են աշխատանքային պայմանագրով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերի.

6) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Պայմանագրի համաձայն Գործատուին վճարվող դրամական միջոցները նախատեսված են՝

1) «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափով Շահառուին աշխատավարձ վճարելու համար:

2) Շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում՝ նաև պարտադիր սոցիալական վճարը, ինչպես նաև աշխատանքային պայմանագրը լուծելու դեպքում աշխատողի հետ կնքված վերջնահաշվարկը Գործատուին փոխհատուցելու համար:

3) Գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետին «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով գումար ամսական կտրվածքով վճարելու համար:

10. Պայմանագրի 9-րդ կետում նշված դրամական միջոցները Գործատուին են վճարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 12 հավելվածով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

IV. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

11. Պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ արտակարգ և անկանխատեսելի հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 2 (երկու) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

V. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12. Գործատուն և Շահառուն Պայմանագրով սահմանված դեպքերում պարտավորվում են Տարածքային կենտրոնին վերադարձնել Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Տարածքային կենտրոնի կողմից վճարված գումարը «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

13. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու կամ էլեկտրոնային փոստի միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

VI. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

14. Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ՝

1) Պայմանագիրը համարվում է պատշաճ կերպով կնքված և իրենց համար ունի պարտադիր իրավաբանական ուժ,

2) Պայմանագիրն իրենց համար հասկանալի է իրական, պարտադիր և իրագործվող,

3) պատրաստ են իրականացնել Պայմանագրից բխող իրենց պարտավորությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները,

4) Պայմանագրի կնքումը և կատարումը չի խախտում որևէ այլ պայմանագրի պահանջ, որում Կողմերը միասին կամ յուրաքանչյուրն առանձին հանդես են գալիս որպես կողմ, ինչպես նաև երրորդ անձանց որևէ իրավունքներ,

5) Պայմանագիրը համապատասխանում է Կողմերի կամահայտնությանը, իրենց համար պարզ և ընդունելի են Պայմանագրի կնքման և դրա չկատարման իրավական հետևանքները:

VII. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

15. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

16. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

17. Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև լիիրավ համաձայնություն՝ դրանում արտացոլված դրույթների վերաբերյալ:

18. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Պայմանագրի մեկնաբանման, ինչպես նաև այլ պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

19. Կողմերի միջև այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, կարգավորվում են Կողմերի համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

20. Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ Պայմանագրով:

21. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի (նրանց լիազոր ներկայացուցիչների) կողմից:

22. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետի ավարտը: Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը Կողմերին չի ազատում պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունները պատշաճ կատարելու պարտավորությունից:

23. Տարածքային կենտրոնը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և վաղաժամկետ լուծել այն, եթե Պայմանագիրը կնքելուց Շահառուն չի ընդունվել աշխատանքի Գործատուի մոտ առնվազն Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետով կամ Գործատուն կամ Շահառուն թույլ են տվել Պայմանագրի էական խախտում:

24. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակներից, որոնցից Տարածքային կենտրոնին, Գործատուին և Շահառուին տրամադրվում է մեկական օրինակ:

IX. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարածքային կենտրոն՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության

Միասնական սոցիալական ծառայության *Հրազդան* տարածքային կենտրոն
(Տարածքային կենտրոնի անվանումը)

Գտնվելու վայրը *ք. Հրազդան [illegible] 2ա*
Հեռ. *0223-98-70*
Էլ. փոստ *mesrop.mkhitaryan@ssa.service.am*
Հ/Հ *900011009550*
Ի դեմս *[illegible] Մխիթարյան Մեսրոպ*
(պաշտոնատար անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

(ստորագրությունը)

Կ.Տ. *09* 20*21* թ.

Գործատու

«[illegible]» ՓԲԸ
(Գործատուի անվանումը)

Գտնվելու վայրը *[illegible] ք. Հրազդան [illegible] 2ա*
Հեռ. *094931419*
Էլ. փոստ
Հ/Հ *2436103641330000*
ՀՎՀՀ *03547424*
Ի դեմս *տնօրեն [illegible]*
(պաշտոնատար անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

(ստորագրությունը)

Կ.Տ. *23* *09* 20*21* թ.

Ծանուցում

[illegible]
(ազգանունը, անունը)

Բնակության վայրը *ք. Հրազդան [illegible] 7/7*
Հեռ. *098802682*
Էլ. փոստ

(Աշխատողի կամ ներկայացուցչի ազգանունը, անունը)

(Աշխատողի կամ ներկայացուցչի ստորագրությունը)

23 *09* 20*21* թ.